

մի բէֆիգլէրիմ իլէ պէրապէր Հագ
թէալա Հաղրէթլէրինտէն տիլէրիզ
քի պէտէլ օլարագ քէնտի մէրհամէթ
լէրինի իհսան էյլէյուէլ, էօմիլէնիւ
զիւ տախի տօլու էօմի իլէ մուամմէր
էյլէյէ . քի ֆիրրինիզէ գօտու զուէնուզ
պուէնճա էյլիքլէրին իճրասընտա պու
լունմաղա քէմալ մէրթէպէ գա
տըր օլասընըզ, վէ պուէնուէնիլէ պէրա
պէր Սիլլէթիմիլ շօճուգլարը տախի,
սայէի Տէվլէթ, վէ սայէի Վիլլէթտէ
վէ Հաղրէթլինիզ սայէսինտէ իլմ ու
ֆինուէն թահսիլ իթմէկէ գատըր օլ
սուէնլար :

Պ. Յ. Յարր-Բիւնէան
Թէլէշ Տէպիւթանի Սար
Լագրու Սանասլըրլէն :

Պատարագ Ելիթ
1880 Նիսան Կ

ԱՐԳԻՆՅՈՒՆ

ՍԵՏԱՅԻ ՀԱԳԸԳԻԷԹ

Վասն պահելոյ դմէղ ՚ի զգար
տու թենէ մարդկան և յորոգայ
թից սատանայի զտէր աղաչեսցուք
Ժամգիր :

Ոչ սակաւ յաւելլով քան թէ
զայրացմամբ կը լսենք վերջին օրերս
Պօլսոյ մէջ Սէտայի մը ձայնը Լիբիկէի
եղերքներն ալ արձագանք տուած :
Թողունք ուրիշներու իրեն վրայ ու
նեցած կարծիքը, սակայն ինքն իր վը
րայ այնպէս կարծած և վստահացած
է, որ եթէ երբէք խօսք մը լսէ, նոյն
խօսքը դատելու գիտութիւնն ունի
ինքը . եւ եթէ երբէք սլիտի խօսի,
խօսելէ յառաջ կըսէլ գիտէ իւր խօս

քը : Սակայն այսօր գործերն այնպէս
կը ցուցնեն որ կամ երբէք չգիտեր
և չգիտնալովն հանդերձ չհասկնար
ալ, և կամ գիտութեամբ կը ստէ իւր
խօսքերուն մէջ, նստառակ ունենալով
խաբէլու :

Չկարծէք երբէք Սէտան, որ Չեր
զըսարտու թիւնը սլիտի զօրէ Հայ ե.
կեղեցականին վրայ . եթէ դուք չու
նիք երբէք ձեր լսածը դատել, հասա
րակութեան հասկացող մասը ունի
դատել ձեր լսածը . եթէ դուք չու
նիք ձեր խօսելիքը կըսէլ, հասարա
կութեան հասկացող մասը մտաց դա
տաստանաւ կործեաց աղատութեան
ատենին առջեւ . գիտէ ձեզի պատաս
խան կըսէլ : Եթէ չգիտէք դուք
ճշմարիտը խօսիլ և գեռ հաստատուն
էք ձեր հին նպատակին, այսինքն հա
սարակութիւնը խաբէլով ձեր ուղած
տեղը գործածելու նպատակին վրայ,
հասարակութեան հասկացող մասը
դարձեալ ունի քննութիւն քս մէն մի
խօսուածքներուդ և գիտէ խայտա
ռակել քու խաբէութիւնները նոյն
խիկ պարզամտաց առջեւ :

Չարին չոր նպատակը թէ և ըլ
լայ հարկը աշխատութեամբ, կը կա
սի բարւոյն առջեւ եթէ մէկ աշխա
տութիւն ալ ունենայ :

Սեղ համար երբէք հարկ չկար,
որ ձեզի դէմ գրիւ շարժէինք այսօր,
վասն զի հասարակութեան հասկացող
մասը վսեմապէս պատասխանելով
պատրանձեցուց թերեւս ղձեղ աշ
խարհի առջեւ :

Կաթողիկոսութեան այն անարգ խըն
դիրները, պապագաւանութեան վե
րաբերեալ այն ամօթալի առաջարկու
թիւնները, որոնք աշխարհի մեծագոյն
մասին պատկառանք ազդեցին, ղձեղ
չկրցան ամաչեցնել տակաւին . վասն
զի երեսնիդ պինդ է և ոչ եթէ ե

բեանիդ միայն պինդ է, այլ թէ չէք հասկնար ի՞նչի վրայ կը խօսիք, ի՞նչի վրայ կը բարբառնէք: Օտիւր ալիք չունի կ'ըսէք ու կը պնդէք, մէկէն հողմն ալ կը շնչէ, ալիքները կը կատարեն մինչեւ անգամ ձեզմէ մէկ քանին տանելու չափ կ'սպառնան, դուք դարձեալ բուերու տրձագանդ առնող մանր պրերուսն նման մի և նոյն ձայնն է կը հանէք: Կ'ուզէք որ աշխարհըս համողէս թէ ծովը չալէկածիր: Եւ դեռ պէտք է իւր աշխատիլ, եթէ աշխարհ այդ ծովուն տէրացը մէջ չը ծփար:

Հռովմէական կղերին սխալը գուցեւո՛ւ համար հայ կղերին ընթացքը կը դիտէք, (եթէ դիտումնիդ ալ դիտումն է.) հայ կղերին համար այդ հոգ չէ, վասն զի նա վստահ է իւր ընթացքին վրայ, և թէ քննութեանց առջեւ ի՞նչպէս պիտի հանգիստանայ, դարձեալ դիտէ:

Հայ կղերին մէկուն ունեցած արտաքին յանցանքն արդէն նոյն ինքն հայ կղերը ծածկած չունի, եթէ այսօր հայ կղերն հռովմայեցւոյն պէս ծածկելու ըլլար իւր ընկերին անսանձ յանցանքը, թերեւս իրաւունք կ'ունենայիք դուք այդ պէս խօսելու: Եւ կամ եթէ հայ կղերն ինքնին չարխաբակէր այդ վատ ընթացքն ունեցող անհատը, այն ատեն շատ դժուարին կ'ըլլար քեզի լսել այդպիսի լուր մը, թէ Երթամարայ կաթողիկոսը մօր դաստիարակ է, Սիսինը շնացող է. և ոչ միայն քեզ դժուարին պիտի ըլլար իմանալ այլ թէ նոյն ինքն ժողովուրդն ալ պիտի չկարենար դիմանալ. ըստ ուրում կեղծաւորութիւն չկայ Հայոց մէջ, ուստի անչու չտ է որ պիտի իմանայ առ հասարակ ամենայն ոք, վասն զի ճշմարիտ է Եւտարանի խօսքը «Չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտ-

նեցի, և ոչ դադանի որ ոչ ծանխի»:

Որո՞նք են ձեր գիտցած Սրբազանները Սէտա, որ վանքերու մէջ արուամուրութիւն, կուսապղծութիւն և սրբապղծութիւն կ'ընեն, որոնք են այդ վանահայրները և վարդապետներ, ներք զորս մենք չենք դիտեր: Եթէ դուք դիտէք այդ տեսակ վանահայրներ և վարդապետներ հռովմայ վարդապետաց կամ Եկեղեցականաց մէջ, դուք անոնք ալ յայտնեցէք ազատութեն, վասն զի երբոր ալ ըլլայ պիտի յայտնուին:

Շատերն ըստ որում ուրիշին վերայ եղածները հասկնալու կարողութիւն չունին, և պէտք եղած դիտողութիւններէն զուրկ են, իրենց վերայ գիտցածնին ուրիշին վրայ ալ կը զուրցեն:

Ինչպէս որ երկու կոյր կերակուրի նստած քաջա կերած ատեննին մէկը որ երկերկու հատ կ'առնայ, միւսին կը հարցունէ, թէ ընկեր, ինչու երկու երկու հատ կուտես, մէկալը զարմացմամբ մը ըսաւ. ընկեր, մեր աչքերը չեն տեսնար ինչէն կը կարծէք որ երկերկու հատ կ'ուտեմ, այն ատեն ուղիղ խօստովանելով ըսաւ որ ըստ որում ինքը երկուքական հատ կ'ուտեմ, այնպէս ալ քեզի համար կը կարծեմ:

Սէտա, չըլլայ թէ դուք ալ այս հետեւաբանութեամբ կը խօսիք. եթէ այնպէս է, լուռ կեցէք. որպէս զի աւելի ամօթահար չեայտառակիք: Ասոյ տառակութիւննիդ թէ և կատարեալ է, տակայն եթէ լուելու ըլլայք, դեթ այսուհետեւ չէք խայտառակուիր շարունակ:

Խօսած խօսքերնիդ կըսելու կամ քննելու կերպ մը ցոյց տանք ձեզ Սէտա, եթէ կ'ուզէք Հայ Եկեղեցականին և հռովմէականին մէջ բաղդատութիւն ընել, ձգեցէք դուք ա-

մէն շողակրատանքները և բարբաջ մուկներ եկէք: Արարիայի խորշերը այն գեղացի Արար-Ֆելլահներուն հարցուցէք, և կրտսեր կանաք ստուգապէս և ոչ այդպէս դուրսերէն դրաբանելով կրտսեր կանաք Հայ և Կաթուղի եկեղեցականաց վարդերուն:

Օրպարտողին զէնքը փշերու համար ժամանակին արդեանցն սպասելու է: Օրպարտութեան դէմ անգծելի վահան վարձառուներու դիտողութիւններն ու քննութիւնն է: Օրպարտողին դէմ ուրիշ խօսք խօսիլ աւելորդ է, բայց միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ աղօթքն քննութեանու: «Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան և յորդայթից սատանայի զոհեր աղաչեսցուք»: 7:

Հայոց Եկեղեցականը Հռովմայ Եկեղեցականին հետ այդ զեղծումներու մէջ բաղդատելիս աւելորդ է վասն զի Ղլթմանարայ կամ Սիսի կաթուղիկոսի մը ասորիմաւոր քննութացքը, (որով նոյն եկեղեցականներն իրենց պաշտօնին մերժում են), հայերն հռովմայեցւոյ չափ անմիտ չին ընէր: Վասն զի կաթուղիկոսի մը իւր նախորդին մահուանը կամակից ըլլալով պաշտօնն յափշտակելու աշխատութիւնը, որ ի գերելեղած է, չկրնար հաւատարմաբար պաշտօնի մը պատգամութեան ամփոփելը, ի եւ նոյն ամփոփումն իրոյ լրացած անհամար պաշտօնութեանցն արդիւնքն մեծ թափօրին մէջ ծնունդ մը մէջ տեղն հանելուն:

Այդ Սիսի կաթուղիկոսին իրոյ զուրկածնիդ շնութիւնն ալ շատ երկբայելի է մեզ համար, որովհետեւ ան երբեմն կաթուղիկացած և հռովմայ վարդապետաց հետ բաւական ընկերութիւն է ըրած:

Արշափ որ խօսելու ըլլայք դարձեալ ի զուր է Սէտա, վասն զի Պատմութե յիշատակարաններն իրեն էջերու պարունակած ճշմարտութիւնքով խորշելի ըլին Հռովմայ Եկեղեցականաց քննութացքը հանուր աշխարհի առջև: Եւ ի թիւն արեւելեան Հռովմականաց Եկեղեցականներուն անգամ խորշելի եղան որոնք թեւեւ ըստիպեալ գնացին Հռովմայ սորորատայն իրենց կրած տառապանքներով իրենց եղած անարժան առաջարկութեանց սարկական անուանարկուէր պատճառաւ, թերեւս հռովմայ արարձանները անգամ մ'ալ չտեսնելու ուխտիւ և համոզմամբ վերագարձան:

Ինչպէս կ'ուզէիք Սէտա, Պատմութիւնը արեւելեան ազգաց մէջ մտած, և անոնց ամէն իրաւունքն յափշտակելով տարի առկ տանելէ վերջերք ուզեց որ անոնց խղճին փայտեղ տիրութեան, թերեւս չհետեւին ճշմարտութեան սիրտները: Ինչպան այն օրերը Սէտա, դուք իբրեւ թէ ժողովրդեան առջև Եկեղեցականները կը պատուէիք, նոյն կարծած եկեղեցականներէդ պաշտօնն ընդունելու մտօր:

Ճշմարտութիւնը երբ որ ալ ըլլայ կը յայտնուի հրապարակաւ վասն զի բոլորքսից է սրտեբու և ճշմարտութեան սիրտը չէ կարող լռել խաղա:

Սէտա, Հայոց Եկեղեցականութիւն սկիզբէն զգուշանալով այսօրեւան իրեն իրոյ քերու կեղտէդ իւր գրութեան մէջ ամուսնացեալ քահանայներ ունենալ օրինադրած է, որպէս զի քահանայից կարգը կուտայիլքներ չգտնուին, ժողով ունեցողները միայն վարդապետ և եպիսկոպոս ըլլան:

Ասոր ընդ հակառակը Սէտա, Հռովմայ Եկեղեցականութիւնն իր

մէջէն իսպառ արդիլած ամուսնացեալ քահանայ ունենալը, որպէս զի առիթ ունենայ յիշեալ կեղտերն իւր վրայ առնելու :

Ի՞նչ հարկ կայ մեզ որ պատմութեանց եջերէն Հռովմայ Ալիզեցա կանայք և պատերազմ իրենց կենաց մէջ գործած այդ տեսակ մեղքերն համբեր ձեր տկանքին, դուք արդէն անոնց ամէնքն ալ գիտէք մեղմէ աւելի քան, և թերեւս մեր չգիտցածնէ յուն ալ տեղեկութիւն ունիք : Անդի միայն կը պատկանի որ առաջարկներ ձեզի թէ որոնք են այն վանահայրեր, վարդապետները որոնք ձեր քսած պղծութիւնները գործած են ըսեք մեզի հրապարակաւ և շատ է մեզ չե նորհակալ բլրաւ համար, իսկն զի միշտ կը սանձեմք այնպիսի մէկն և թէ պատահելու բլրայ, և կը փափագիմք ամենէն յառաջ գիտնալ այդպիսի և զեռնութիւնները :

Այնիմարուեցէք Ահա, քանի որ Պատին անտաքականութիւնը մերժեց այսօր աշխարհ, և այսուհետեւ այնպէս որպիսի առած անթաղի մեղաց թողութիւնները և ոչ մէկ գանկի պիտի ծախուին, և աշխարհ պիտի կարենայ համոզել պատին թէ ինքը սխալական է արարած որ և է մարդու մը հաւասար, այսուհետեւ պատն ինքնին պիտի ստիպուի թէ զինքը և թէ բոլոր իւր եկեղեցականներն ամենազոռ շատ և քանակաւ սանձել որ այսուհետեւ ձեր բոլոր տեսակ պղծութիւններ գործելէ կասին Այն ատեն ձեզ ալ զիւրին կըլլայ բերան բանալ և բսել թէ Հռովմայ Ալիզեցայ և պիտիպոսներուն նայեցէք : Հիմա որ չամաչած ասիկայ կը զուրցէք հասարակութեան, որ եպիսկոպոսիգ պիտի նային Անցեալ և պիտիպոսներէն Պորժիայի նային, թէ ներկայ Ապիս

կոպոսներէդ Հասունեանին նային, որոց առաջինը թերեւս գիտես թէ իւր պապութեանը մէջ քանի ճնուեղ ունեցած է, և իւր աղջիկէն քանի, ասոր պատիժը առաւ Վատում նոյն ինքն իրեն գործացը մէջ, բայց դարձեալ չըբաստացաւ : Երկու որդիներ ունեցաւ որ մէկմէկու գէժ մահ կը նիս թէին իրենց քրոջը սիրահարելով երկուքն ալ Վորժեր, որ բերան առնելու և խօսելու ալ անարժան են, և խօսողին իսկ ամսթ ու պատկառանք բերող, այնչափ պիտի գործէր :

Նաւասիի այս պղծութեանց գործողները, վերջին դարու մէջ պիտի պաշտպաններ ալ գտած են նաեւ աշխարհականներէն, անմիտ Ահա մը որ պաշտպանածն ի՞նչ է չգիտէր, պիտի Ահա մը, որ չգիտէր պաշտպանածին յանցանքը ծածկելու համար զով կը զրարարէ : Նարդ Ահա մը, որ իրեն պաշտպանները մինչեւ գիտեն իրենց անարգարանակ գործերը, ինքն ելեր անոնց կը պահպանէ աշխարհի առջեւ :

Ահի մարդ մարդու մը յանցանքը միայն մէկ մարդու մը տեսութեանէն կրնայ ծածկել : Ահի մարդ շատ մը մարդու համոյն աշխարհի աշտայ առջեւ գործած յանցանքը ի՞նչպէս կարող է ծածկել :

Փութա Ահա, արտիգ մէջէն դետի մը հոսանքը կ'անցնի, փութա առջեւը պարիսպ քաշէ գուլէ կարող բլաս արդիլել որ արտիգ հողերը չտանի : Օտիւ և զերբը դետի մը բերանը պարիսպ քաշէ, և արդիլած կ'ըլլատ դետը ծալը թափելէ : Այնտեք Ահա, Քիչ մը գիւրին գործին կը պիտի, բայց շատ գծուարին սոր կոխել, խորհրդոյգործ չէ :